ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 24.11.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
ՍՑ-34/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.03.2016թ. թիվ 1/73-3/10219-16, 04.04.2016թ. թիվ 1/73-3/11257-16 և 21.04.2016թ. թիվ 1/73-1/12563-16 գրություններով ներկայացված «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 03808571) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-34/16 բողոք), կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, Ընկերության 21.11.2016թ. թիվ 121 գրությունը, Արտաշատի ՏՀՏ-ի 12.07.2016թ. տրամադրած պարզաբանումները, ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-34/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 22.11.2016թ. ներկայացրած եզրակացությունը պարզեց.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Թիվ 17 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի 17.03.2016թ., «Նորագավիթ» պոլիկլինիկա ՊՓԲԸ-ի 29.03.2016թ. թիվ 02/46 և «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի 21.03.2016թ. թիվ 92-077 գրությունների և դրանց կից ներկայացված փաստաթղթերի հիման վրա, համապատասխանաբար 21.03.2016թ. թիվ 1/73-3/10219-16, 04.04.2016թ. թիվ 1/73-3/11257-16 և 21.04.2016թ. թիվ 1/73-1/12563-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

2. «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 30.03.2016թ. թիվ 01/04.1/1220-16, 06.04.2016թ. թիվ 01/04.1/1387-16 և 26.04.2016թ. թիվ 01/04.1/1661-16 գրություններով դիմել է «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ին:

«Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն ի պատասխան Կենտրոնի վերը նշված գրությունների 21.11.2016թ. թիվ 121 գրությամբ ներկայացրել է Արտաշատի ՏՀՏ-ի պարզաբանումները՝ հայտնելով.

- «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-16/4-1» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել 15.12.2015թ.:
- «Թիվ 17 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԹՏՊ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել 29.02.2016թ.:
- «Նորագավիթ» պոլիկլինիկա ՊՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՈՐՊՈԼ-ՇՀԱՊՁԲ-15/4/3» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել 15.03.2016թ.:

Ընկերությունը հայտնել է, որ 15.12.2015թ. և 15.03.2016թ. ամսաթվերով պարտավորությունները հաշվարկվել և մուտքագրվել են «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի անձնական քարտում ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային համակարգի ինքնաշխատ եղանակով, որը այդ օրերի դրությամբ օրենքով սահմանված կարգով չի համարվում ժամկետանց հարկային պարտավորություն, իսկ 29.02.2016թ. ամսաթվով ներկայացրած հայտի շրջանակներում Ընկերությունը հարկային պարտավորություն չի ունեցել: Հարկային տեսչության կողմից 02.03.2016թ. ոչ ինքնաշխատ եղանակով անձնական քարտում ներառել է հարկային պարտավորություն տալով հետադարձ ուժ, որը ևս չի համարվում հայտի ներկայացման օրվա դրությամբ առկա հարկային պարտավորություն:

3. «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու 1) 21.03.2016թ. թիվ 92-077 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել, որ Պատվիրատու 1-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-16/4-1» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն:

Պատվիրատուի կողմից սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացվել Ընկերության վերաբերյալ:

Նախարարության կողմից սահմանված ժամկետում եզրակացություն չստանալու արդյունքում, «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն ընդունել է Ընկերության հայտը:

4. «Թիվ 17 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Թիվ 17 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու 2) 17.03.2016թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել, որ Պատվիրատու 2-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԹՏՊ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության արդյունքում «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1.001.909 ՀՀ դրամի չափով:

5. «Նորագավիթ» պոլիկլինիկա ՊՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Նորագավիթ» պոլիկլինիկա ՊՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու 3) 29.03.2016թ. թիվ 02/46 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել, որ Պատվիրատու 3-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՈՐՊՈԼ-ՇՀԱՊՁԲ-15/4/3» ծածկագրով ընթացակարգի մի քանի չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն:

Ի պատասխան Պատվիրատու 3-ի հարցմանը, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, ըստ որի Ընկերությունը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն:

4. ՍՑ-ԳԲԽ-34/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 22.11.2016թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 21.03.2016թ. թիվ 1/73-3/10219-16, 04.04.2016թ. թիվ 1/73-3/11257-16 և 21.04.2016թ. թիվ 1/73-1/12563-16 գրություններով ներկայացված «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 03808571) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

5. ՍՑ-ԳԲԽ-34/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 21.03.2016թ. թիվ 1/73-3/10219-16, 04.04.2016թ. թիվ 1/73-3/11257-16 և 21.04.2016թ. թիվ 1/73-1/12563-16 գրություններով ներկայացված «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-16/4-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1):

• Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով 15.12.2015թ. հայտ է ներկայացրել «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն:

• Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն 15.12.2015թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

• Պատվիրատու 1-ը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 16.12.2015թ.

կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի վերաբերյալ:

• Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.12.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն ***2015թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1.545.906 ՀՀ դրամի չափով:

• Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովի կողմից 22.12.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվել թվով 18 չափաբաժնի մասով որպես ընտրված մասնակից ճանաչել «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ին:

• ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի ՏՀՏ-ն «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ին ուղղված 12.07.2016թ. թիվ 19-03/1288 գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից ճշգրտված 2014թ. հաշվետու տարվա ռեզիդենտների շահութահարկի հաշվարկի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն հաշվարկված շահութահարկի կանխավճարների եռամսյակային գումարը կազմել է 1.545.725 ՀՀ դրամ, որը շահութահարկի անձնական հաշվի քարտում արտացոլվել է վերոհիշյալ հոդվածով սահմանված վերջնաժամկետում, ուստի Ընկերության հարցման դեպքում 15.12.2015թ., ***որը <u>16.12.2015թ.-ից դիտվում է որպես ապառք:</u>***

2. «Թիվ 17 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԹՏՊ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2):

• Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով <u>29.02.2016թ.</u> հայտ է ներկայացրել «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն:

• Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն 29.02.2016թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

• Պատվիրատու 2-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 11.03.2016թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի վերաբերյալ:

• Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.03.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն ***2016թ. փետրվարի 29-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ ***1.001.909 ՀՀ դրամի*** չափով:

• Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը 16.03.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 3-րդ կետով որոշել է մերժել «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի հայտը, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

• ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի ՏՀՏ-ն «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ին ուղղված 12.07.2016թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վերջնաժամկետից հետո ներկայացված 2015թ. սեպտեմբեր ամսվա հաշվարկի նկատմամբ (1908451 ՀՀ դրամ հարկային պարտավորությամբ) «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ հաշվարկված տուգանքը կազմել է 954225 ՀՀ դրամ, ***որը 02.03.2016թ. մուտքագրվել է սահմանված կարգին համապատասխան*** հաշվարկի վերջնաժամկետով՝ 20.10.2015թ.-ով, իսկ 47684 ՀՀ դրամը ժամկետանց հարկային պարտավորությունների նկատմամբ հաշվարկված տույժն է:

Ընդամենը ***02.03.2016թ. դրությամբ*** կազմակերպության պարտավորությունը կազմել է 1.001.909 ՀՀ դրամ:

3. «Նորագավիթ» պոլիկլինիկա ՊՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՈՐՊՈԼ-ՇՀԱՊՁԲ-15/4/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 3):

• Ընթացակարգ 3-ին մասնակցելու նպատակով 15.03.2016թ. հայտ է ներկայացրել «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն:

• Ընթացակարգ 3-ին մասնակցելու նպատակով «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն 15.03.2016թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության

մասին հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

• Պատվիրատու 3-ը, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 17.03.2016թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի վերաբերյալ:

• Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.03.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն ***2016թ. մարտի 15-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)*** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ ***2.509.774 ՀՀ դրամի*** չափով:

• Ընթացակարգ 3-ի գնահատող հանձնաժողովը 25.03.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետով որոշել է մերժել «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի հայտը, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

• ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի ՏՀՏ-ն Ընկերությանն ուղղված 12.07.2016թ. թիվ 19-03/1287 գրությամբ հայտնել է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 5-րդ ենթակետի համաձայն՝ «Մինչև նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարի հաշվարկումը, հարկատուն շահութահարկի կանխավճարները յուրաքանչյուր անգամ կատարում է նախորդ տարվա վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս չափով:

Քանի որ Ընկերության կողմից 2015թ. հաշվետու տարվա ռեզիդենտների շահութահարկի հաշվարկը ներկայացվել է 15.04.2016թ., ուստի ***2016թ. առաջին եռամսյակի կանխավճարի եռամսյակային գումարը (15.03.2016թ.) վերոհիշյալ հոդվածի համաձայն կազմել է 1.545.725 ՀՀ դրամ, որը <u>16.03.2016թ.-ից դիտվում է որպես ապառք:</u>***

<u>6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Քննելով ՍՑ-ԳԲԽ-34/16 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն***

անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ***ներկայացրել է կեղծ տվյալ***:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

1. «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-16/4-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ

«Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-16/4-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն ներկայացրած հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (15.12.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Պատվիրատուի Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն ***2015թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1.545.906 ՀՀ դրամի դրամի չափով:***

Պատվիրատու 1-ի կողմից սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացվել Ընկերության վերաբերյալ, ի պատասխան որի Նախարարության կողմից սահմանված ժամկետում եզրակացություն չստանալու արդյունքում, Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովի կողմից 22.12.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվել թվով 18 չափաբաժնի մասով որպես ընտրված մասնակից ճանաչել «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ին:

«Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի ներկայացրած ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի տարածքային հարկային տեսչության 12.07.2016թ. թիվ 19-03/1288 գրության համաձայն՝ Ընկերության կողմից ճշգրտված 2014թ. հաշվետու տարվա ռեզիդենտների շահութահարկի հաշվարկի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն հաշվարկված շահութահարկի կանխավճարների եռամսյակային գումարը կազմել է 1.545.725 ՀՀ դրամ, որը շահութահարկի անձնական հաշվի քարտում արտացոլվել է վերոհիշյալ հոդվածով սահմանված վերջնաժամկետում, ուստի Ընկերության հարցման դեպքում 15.12.2015թ., ***որը <u>16.12.2015թ.-ից դիտվում է որպես ապառք:</u>***

Այսինքն, ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի տարածքային հարկային տեսչության 12.07.2016թ. թիվ 19-03/1288 գրության, «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի կողմից ճշգրտված 2014թ. հաշվետու տարվա ռեզիդենտների շահութահարկի հաշվարկի և հաշվարկված շահութահարկի կանխավճարների եռամսյակային գումարը, որը կազմել է 1.545.725 ՀՀ դրամ, ***15.12.2015թ դրությամբ հանդիսացել է հարկային պարտավորություն, որը միայն 16.12.2015թ.-ից է դիտվում որպես ապառք,*** հետևաբար, Ընկերության ունեցած պարտավորությունն Ընթացակարգ 1-ին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 15.12.2016թ., դեռևս չի համարվել ժամկետանց հարկային պարտավորություն:

2.Թիվ 17 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԹՏՊ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ

«Թիվ 17 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԹՏՊ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն ներկայացրած հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (29.02.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Պատվիրատու 2-ի Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն ***2016թ. փետրվարի 29-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1.001.909 ՀՀ դրամի դրամի չափով:***

Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը 16.03.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 3-րդ կետով որոշել է մերժել «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի հայտը, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի ՏՀՏ-ն «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ին ուղղված 12.07.2016թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վերջնաժամկետից հետո

ներկայացված 2015թ. սեպտեմբեր ամսվա հաշվարկի նկատմամբ (1908451 ՀՀ դրամ հարկային պարտավորությամբ) «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ հաշվարկված տուգանքը կազմել է 954225 ՀՀ դրամ, որը ***02.03.2016թ. մուտքագրվել է սահմանված կարգին համապատասխան հաշվարկի վերջնաժամկետով՝*** 20.10.2015թ.-ով, իսկ 47684 ՀՀ դրամը ժամկետանց հարկային պարտավորությունների նկատմամբ հաշվարկված տույժն է:

Ընդամենը ***02.03.2016թ. դրությամբ*** կազմակերպության պարտավորությունը կազմել է 1.001.909 ՀՀ դրամ:

Այսինքն, «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն Ընթացակարգ 2-ին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 29.02.2016թ., չէր կարող կանխատեսել ***1.001.909 ՀՀ դրամի չափով*** ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու փաստը, քանի որ, ըստ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի ՏՀՏ-ի «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ին ուղղված 12.07.2016թ. գրության, համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի՝ 954.225 ՀՀ դրամ հաշվարկված տուգանքը և 47.684 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորությունների նկատմամբ հաշվարկված տույժը (ընդամենը՝ ***1.001.909 ՀՀ դրամ***) սահմանված կարգին համապատասխան հաշվարկի վերջնաժամկետով՝ 20.10.2015թ., մուտքագրվել է ***միայն 02.03.2016թ.:***

3.«Նորագավիթ» պոլիկլինիկա ՊՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՈՐՊՈԼ-ՇՀԱՊՁԲ-15/4/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ

«Նորագավիթ» պոլիկլինիկա ՊՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՈՐՊՈԼ-ՇՀԱՊՁԲ-15/4/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն ներկայացրած հայտի N 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (15.03.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Պատվիրատու 3-ի Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին կատարած հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության

կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն ***2016թ. մարտի 15-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 2.509.774 ՀՀ դրամի դրամի չափով:***

Ընթացակարգ 3-ի գնահատող հանձնաժողովը 25.03.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետով որոշել է մերժել «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի հայտը, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի ՏՀՏ-ն Ընկերությանն ուղղված 12.07.2016թ. թիվ 19-03/1288 գրությամբ հայտնել է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 5-րդ ենթակետի համաձայն՝ «Մինչև նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարի հաշվարկումը, հարկատուն շահութահարկի կանխավճարները յուրաքանչյուր անգամ կատարում է նախորդ տարվա վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս չափով:

Քանի որ Ընկերության կողմից 2015թ. հաշվետու տարվա ռեզիդենտների շահութահարկի հաշվարկը ներկայացվել է 15.04.2016թ., ուստի ***2016թ. առաջին եռամսյակի կանխավճարի եռամսյակային գումարը (15.03.2016թ.) վերոհիշյալ հոդվածի համաձայն կազմել է 1.545.725 ՀՀ դրամ, որը <u>16.03.2016թ.-ից դիտվում է որպես ապառք:</u>***

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի ՏՀՏ-ի 12.07.2016թ. տրամադրած վերը նշված պարզաբանման համաձայն՝ «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի ***2016թ. առաջին եռամսյակի կանխավճարի եռամսյակային գումարը*** Ընթացակարգ 3-ին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ ***15.03.2016թ. կազմել է ոչ թե 2.509.774 ՀՀ դրամ, այլ 1.545.725 ՀՀ դրամ, որը չի համարվել ժամկետանց հարկային պարտավորություն, այն դիտվում է <u>որպես ապառք՝ 16.03.2016թ.-ից:</u>*** Հետևաբար, Ընկերության ունեցած պարտավորությունը 15.03.2016թ. դրությամբ, չի համարվում ժամկետանց հարկային պարտավորություն, այլ այն ժամկետանց է համարվում միայն հաջորդ օրը՝ 16.03.2016թ.:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի ՏՀՏ-ի 12.07.2016թ. վերոհիշյալ գրությունները՝ Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 21.03.2016թ. թիվ 1/73-3/10219-16, 04.04.2016թ. թիվ 1/73-3/11257-16 և 21.04.2016թ. թիվ 1/73-1/12563-16 գրություններով ներկայացված «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 21.03.2016թ. թիվ 1/73-3/10219-16, 04.04.2016թ. թիվ 1/73-3/11257-16 և 21.04.2016թ. թիվ 1/73-1/12563-16 գրություններով ներկայացված «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 03808571) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝ **Մնացականյան Հասմիկ**

Զոհրաբյան Տաթևիկ